

Մեծարգո պարոն վարչապետ

Հաշվի առնելով ներկայումս ստեղծված էպիդեմիոլոգիական վիճակը, ՀՀ պարետի՝ 24-րդ մարտի, 2020 թ. N 14 որոշումով՝ ՀՀ-ում արգելվում է զբաղվել տնտեսական գործունեության մի շարք տեսակներով: Ստոմատոլոգիական ոլորտի գործունեությունը բացառությունների շարքում է, սակայն ՀՀ ԱՆ-ի կողմից սահմանափակված են պլանային այցերը և թույլատրված է սպասարկել միայն ստոմատոլոգիական բուժօգնություն պահանջող անհետաձգելի դեպքերը: Ուստի, մարտ ամսվա երկրորդ կեսից ստոմատոլոգիական կլինիկաները մեծամասամբ չեն գործում, շատ փոքր թվով կլինիկաներ աշխատում են փոքր ծավալով: Ստոմատոլոգիական ոլորտի կազմակերպությունները ուրույն տեղն ունեն երկրի տնտեսության մեջ որպես ՓՄՁ –ներ և նպաստում են բժշկական տուրիզմի զարգացմանը: Ոլորտում ներառված է շուրջ 10 հազար մարդ:

Պետության կողմից կիրառվող սահմանափակումները, տնտեսական վիճակի հնարավոր դժվարությունները և պետության կողմից ոլորտին աջակցելու ծրագրի բացակայությունը կհանգեցնի կլինիկաների 90%-ի փակման և գործազրկության: Կառավարության կողմից առաջարկվող տնտեսական չեզոքացման միջոցառումների փաթեթից կլինիկաների և ստոմատոլոգիական կաբինետների գերակշռող մասը օգտվելու հնարավորություն չունեն, քանի որ իրենց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 24 մլն դրամը:

Արդյունքում, մեր կարծիքով, ոլորտում կմեծանա ստվերային գործունեության ծավալը, կքանկանան բժշկական ծառայությունները, ինչը կունենա իր բացասական ազդեցությունը բնակչության ստոմատոլոգիական առողջության վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրում ենք Ձեզ դիտարկել ստոմատոլոգիական ոլորտի ներառումը տնտեսական գործունեության ժամանակավոր դադարից տուժած ոլորտների ցանկում և հետևյալ քայլերի իրականացումը, որոնք կօգնեն թեթևացնել ստոմատոլոգիական բժշկական կազմակերպությունների առջև ծառայած խնդիրները:

1. Տրամադրել հարկային արձակուրդներ
2. Միջնորդել բանկային համակարգին՝ ստոմատոլոգիական կազմակերպություններին տրամադրել անկախ շրջանառության ծավալից՝ անտոկոս վարկեր աշխատավարձերի և կոմունալ վճարների համար
3. Հնարավորության դեպքում տրամադրել հատուկ պաշտպանիչ պարագաներ (ընչադիմակներ FFP2, FFP3, ձեռնոցներ հաշվի առնելով անձնակազմի և պացիենտների վարակման մասնագիտական մեծ ռիսկայնությունը:

Հայ Ստոմատոլոգների Միություն ՀԿ
Նախագահ՝

Պ. Դադուրյան



Իմպլանտոլոգների Հայկական Ասոցիացիա
Նախագահ, Բ.Գ.Թ., դոցենտ

Կ.Գրիգորյան



Հայաստանի Պերիոդոնտոլոգների Ասոցիացիա
Նախագահ, Բ.Գ.Թ.

Վ.Բակլայան




Հայաստանի Օրթոդոնտների Ասոցիացիա
Նախագահ, Բ.Գ.Թ.

Հ.Սարգսյան




Դիմաձևատային և բերանի խոռոչի վիրաբույժների Հայկական Ասոցիացիա
Նախագահ, Բ.Գ.Դ., պրոֆեսոր

Ա.Ղոդոսյան



Ստոմատոլոգիական Տուրիզմ դեպի Հայաստան Հիմնադրամ
Նախագահ

Դ.Հովհաննիսյան



21-րդ դարի Հայ Բժիշկ Ստոմատոլոգների Ասոցիացիա
Նախագահ, Բ.Գ.Դ., պրոֆեսոր

Կ.Լավայան



13 ապրիլի 2020
Երևան